ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Մատենագրությունից մեզ հասած շինարարական բազմաթիվ տեղեկությունների մեջ սակավադեպ չեն այնպիսիները, որոնք առ այսօր սխալ են հասցեագրված հուշարձաններին, կամ առհասարակ պարզված չէ, թե որ շինությանն են վերաբերում։ Անցել են դարեր, շինություններից շատերը չեն պահպանվել, իսկ շատերի ավերակների վրա կառուցվել են նորերը։ Հուշարձանների կառուցման ժամանակը, տիպը կամ անունը պարզելու գործում կարևոր դեր ունի ինչպես ճարտարապետության ժամանակագրական առանձնահատկությունների, այնպես էլ նրանց անունների ճշտության պարզաբանումը լրացուցիչ նյութերի միջոցով։

Պաշտամունքային շինություններին անուններ դնելու ավանդույթը չափազանց հին պատմություն ունի։ Հեթանոսության՝ բազմաստվածության շրջանում այն կապված էր հասարակական կամ անհատական պահանջների հետ։ Նայած թե ինչ աստծու նախընտրություն ուներ տվյալ վայրի բնակչությունը[1] կամ անհատական կառուցողը, ըստ այնմ էլ տաճարը նվիրվում էր այդ աստծուն, որին հաճախ վերագրվում էր հովանավորի դեր։

Քրիստոնեական վարդապետությունը, կանգնելով միաստվածության դավանանքի վրա, սկզբունքորեն ընդհանրացրեց պաշտամունքի գործառնական իմաստը, և անվանակոչության առարկան ձեռք բերեց այլ շարժառիթներ։ Քրիստոնեական պաշտամունքային շինությունները անվանակոչվել են հիմնադրման ժամանակ, Հին և Նոր կտակարաններից վերցված սրբերի անուններով, շատ անգամ էլ՝ նահատակների և եկեղեցական ականավոր գործիչների անունով։ Վերջին դեպքերը բնորոշ են նաև անհատական միջոցներով կառուցված եկեղեցիներին և բխում են կառուցողի անձնական նախապատվությունից, որը նա տալիս է այս կամ այն սրբին։ Թեև անձնական նախապատվության մեջ կարելի է տեսնել հեթանոսական ժամանակներից եկող՝ սրբի ընտրության ավանդական վերապրուկ, սակայն դրան զուգընթաց անվանակոչության այդ եղանակը վեր է հանում նաև այն շարժառիթները, որոնք կապված էին նոր դավանանքի սկզբունքների հետ։ Քանի որ քրիստոնեական աստվածը համայնիմաստ մեկնաբանություն ուներ, անվանակոչությունն ամենևին չէր որոշում պաշտամունքային շինության դերն ու նշանակությունը և այդ պատճառով անվան նախընտրությունը ձեռք էր բերում անհամեմատ ավելի մեծ ազատություն։ Այս երևույթի ուշագրավ դրսևորումներից մեկը կարելի է տեսնել եկեղեցիների ոչ սակավ հանդիպող այն անունների մեջ, որոնք կոչվել են նույնիսկ կառուցման նպաստը հոգացող մարդկանց

[1] «Всеобщая история архитектуры», т. II, М., 1973, էջ 31—32։

անուններով, եթե, իհարկե, այդ անունները համընկել են սրբերի անունների հետ[2]։

Թերևս հենց այս հիման վրա էլ ենթադրվել է, որ Բյուրականի Ս. Հովհաննես եկեղեցին կառուցված է Հովհաննես Դրասխանակերտցու կողմից[3]։ Եկեղեցու անվանակոչության հարցում նման մոտեցումը գալիս էր սեփական հոգու համար նշված սրբի մոտ բարեխոսություն ունենալու մղումից. այդ համոզմունքը, անտարակույս, ավանդականացրել էր եկեղեցին և սովորություն դարձրել շինարարական ու նվիրատվական արձանագրությունների մեջ վավերացնել այն։ Վիմական այս վավերագրերում «բարեխոսություն» բառն էլ վեր է ածվել հատուկ տերմինի, կառուցման նպատակը բացատրելու համար։ Հնագույն արձանագրությունը (թերևս հայերեն գրված առաջինը) Տեկորի տաճարինն է (V դար), որն ավանդում է եկեղեցին կառուցողի հոգու համար բարեխոսության մասին։ Միաժամանակ, որպես առաջին վավերագիր, Տեկորի արձանագրությունը կարող է վկայել, որ հոգու բարեխոսության այդ իմաստավորումը սկիզբ է առել շատ ավելի վաղ ժամանակներում, թերևս քրիստոնեության ընդունման առաջին իսկ տարիներից, երբ հայ եկեղեցին պաշտամունքային բազմաթիվ շենքերի կառուցման կարիք ուներ։ Նպատակ ունենալով մասնավոր մարդկանց ևս մասնակից դարձնել եկեղեցու շինության գործին, դատելով արձանագրությունների բանաձև դարձած շարադրանքից, եկեղեցին օրինականացրել է այն միտքը, որ կառուցողի հոգու համար դա արժանի բարեխոսություն է հանդերձյալ աշխարհում և ահեղ դատաստանի օրը։ Սակայն չնայած հարցի այդ կարևոր կողմին, հայոց պատմության մեջ բացառված չեն եղել անվանափոխության դեպքերը, մանավանդ, երբ եկեղեցին նորոգել են հետագայում։ Տեկորի տաճարը կառուցելիս Սահակ Կամսարականը նախընտրել է Ս. Սարգիս անվանել, սակայն Խոսրովանուշ թագուհու՝ X դարում գրված արձանագրության մեջ Տեկորի տաճարը հիշատակված է «Երրորդություն» անունով[4]։

Վերանվանման սովորույթի առաջացման պատճառները, թերևս, արհավիրքներով լի պատմական անցքերն են եղել, որոնց հետևանքով բազմիցս ամայացել են բնակավայրերը, երկար ժամանակ անտերության մատնվել եկեղեցիները, մոռացվել են նրանց նախնական անունները և նոր բնակիչները նրանց տվել են բոլորովին այլ անուններ։ Ճիշտ է, արձանագրությունների կամ այլ վավերագրերի առկայության դեպքում ձգտել են վերականգնել ու պահպանել հին և իսկական անունը, սակայն միշտ չէ, որ հաջողվել է այդ։ Իսկ նման իրավիճակները հաճախ կրկնվելու հետևանքով վերանվանման դեպքերը, ինչպես Տեկորի օրինակն է ցույց տալիս, դարձել են սովորական։ Այս ամենի հետևանքով բազմաթիվ եկեղեցիներ Հայաստանում փոխել են իրենց անունները, կոչվել են պայմանական անուններով (մանավանդ Անիում), կամ իսկական անվանը զուգընթաց կոչվել են ժողովրդի կնքած անունով ևս՝

---

2 Հոռոմոսի Ս. Հովհաննես՝ կառուցել է Հովհաննես Շահնշահը, Խծկունքի Ս. Սարգիս՝ կառուցել է Վեստ Սարգիսը, Կեչառիսի Ս. Գրիգոր՝ կառուցել է Գրիգոր Մագիստրոսը և այլն։

3 Վ. Աբրահամյան, Հայկական ԽՍՀ պետական հուշարձանները, IV, Աշտարակի շրջան, Երևան, 1940, էջ 16։ Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության. II, Երևան, 1948, էջ 124։ А. Л. Якобсон, Из истории армянского средневекового зодчества, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 116—124։

4 Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 133։

Պեմզաշենի Ս. Գևորգը կոչվում է նաև Մակարավանք, Հայկաձորի Ս. Գրիգորը՝ նաև Կարմիր վանք, իսկ Աշտարակի Ս. Աստվածածինը ավելի հայտնի է Կարմրավոր անունով։ Այն դեպքերում, երբ եկեղեցու անունը վկայող որևէ վավերագիր չի պահպանվել, եկեղեցին կոչվել է վայրի անունով։ Նմանօրինակ վիճակում է գտնվում Բյուրականի Արտավասիկը։

Այսպիսով, Բյուրականի եկեղեցիներից մեկը՝ Ս. Հովհաննեսը, անվան պատճառով համարվում է Հովհաննես Դրասխանակերտցու կառուցածը և թվագրվում X դարով, իսկ մյուսի անունը հայտնի չլինելու պատճառով կոչում են Արտավասիկ և հորինվածքային տիպի բնութագրի հիման վրա թվագրում VII դարով։ Ս. Հովհաննես եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնում, իսկ Արտավասիկը՝ արևելյան ծայրում։ Ս. Հովհաննես եկեղեցու հարավային պատին X—XI դդ. արձանագրություններ կան, սակայն եկեղեցու անունն այնտեղ չի հիշատակված։ Արձանագրություններին հակառակ, չափազանց պերճախոս է եկեղեցու ճարտարապետությունը, որի ժամանակագրական առանձնահատկություններն անհերքելիորեն բացառում են Դրասխանակերտցու կողմից կառուցված լինելու հնարավորությունը։ Եկեղեցին իրենից ներկայացնում է ուղղանկյուն խորանով ընդարձակ թաղածածկ սրահ։ X դարում այդպիսի սրահի կառուցումը կաթողիկոսի կողմից, այն էլ ուղղանկյուն խորանով և հատկապես անգմբեթ, անհավանական է։ Բացի հորինվածքային առանձնահատկություններից, եկեղեցու բնութագիրը բոլորովին չի համապատասխանում Դրասխանակերտցու տված նկարագրին։ Եկեղեցին ունի չափազանց խայտաբղետ նորոգումների հետքեր, վաղ միջնադարյան[6] առանձնամասերով և զարդապատումներով հանդերձ։

Հայ ճարտարապետության մեջ ուղղանկյուն խորաններ կառուցվել են միայն հեթանոսական շրջանում, քրիստոնեական նույնիսկ ամենավաղ (Թերևս և ուշ հեթանոսական) պաշտամունքային շինությունները (Քասաղ, Ջարջարիս և այլն) ունեցել են պայտաձև խորան, իսկ շատ դեպքերում հին շենքերի խորանները վերաշինվել են այդ ձևով (Տեկոր, Երիցվանք[7] և այլն)։ Խորանի այս ձևը տարակուսանք է առաջացրել նաև Ռ. Թորամանյանի մոտ, սակայն չունենալով կանխորոշման համար հիմնավորված տվյալներ, նա չի փորձել վերանայել հուշարձանի թվագրության հարցը։ Ռ դեպ, խորանի մեջ արևելյան պատի կենտրոնում առկա է քրիստոնեական տաճարի համար անսովոր, շքեղ ձևավորված մի որմնախորշ, որի գործառնական բնույթը որոշակիորեն աղերսվում է Գառնիի հեթանոսական տաճարի նույնատիպ որմնախորշի հետ։

Խիստ ուշագրավ են խորանի ու ավանդատների տեղադրության ձևերը։ Ավանդատները հավելվածք են։ Այդ պարզ երևում է միացման կարերից, որոնք ստորին մասում անհետանում են ուշ շրջանի նորոգման հետևանքով։ Խորանը բավական մեծ է, նրա լայնքը գրեթե հավասար է սրահի լայնքին, որի պատճառով հավելված ավանդատները շինությանը հաղորդել են Т-աձև հորինվածք։ Քրիստոնեական խորանը եղել է փոքր և ծառայել է որպես «սրբություն սրբոց»՝ վեմ քարը կամ պաշտամունքային այլ իրեր տեղադրե-

---

5 Ռ. Թորամանյան, Նյութեր..., II, էջ 125։

6 А. Л. Якобсон, Նշվ. աշխ., էջ 120—123։

7 A. Manucharian, La basilica Erizavank ad Artzvanik, „Ricerca, sull'architettura Armena", 10, Milano, էջ 8—13։

լու համար: Հետագայում ևս նրա չափերը չեն փոխվել, թեև միաժամանակ այն ծառայում է նաև որպես բեմ: Ըստ էության այստեղ բեմ գոյություն չունի, նրա հարթակը չնչին տարբերությամբ է բարձր սրահի հատակի մակերեսից: Այս հանգամանքը մեծապես բնորոշ է վաղ քրիստոնեական եկեղեցիներին և ըստ երևույթին պայմանավորված էր հեթանոսական շենքերի ընդօրինակման պարագաներով:

Ավանդատները իրարից տարբերվում են ինչպես ձևով, այնպես էլ չափերով: Հյուսիսակողմինն ավելի մեծ է, չունի սրբացված որմնախորշ: Դա պարզ ուղղանկյուն սենյակ է: Հարավակողմինը երկարավուն է, փոքրիկ և արևելյան կողմում ունի սրբացված որմնախորշ: Ավանդատան երկարավուն այս ձևը վաղ միջնադարում չի հանդիպում, այն բնորոշ է մասնավորապես XIII դարին: Հյուսիսային ավանդատունը թեև իր ձևով հնության մեծ հավանականություն ունի (հատկապես սրբացված որմնախորշի բացակայության պատճառով, որն առաջ է գալիս VII դարից)[8], սակայն Ա. Յակոբսոնը այն համարում է ուշ ժամանակների հավելվածք: Եթե ավանդատները հավելվածք են, ապա մինչև հավելումը խորանը մի փոքր նեղացված ծավալով շարունակվել է սրահի արևելյան կողմում: Խորանի տեղադրության այս եղանակը նույնպես հանդիպում է միայն վաղ քրիստոնեական, ակներևաբար և հեթանոսական շենքերում, երբ ավանդատների կարիքը տակավին գոյություն չուներ (Քասաղ, Եղվարդ, Ջարջարիս, Փարպի և այլն): Մասնավորապես այն նման է եղել Զովունու Պողոս-Պետրոս եկեղեցու խորանի ձևին և տեղադրությանը[9] (նկ. 1, հատակագիծը կազմեց Ա. Լ. Յակոբսոնը):

Եկեղեցու նորոգման հետքերը ևս ունեն բավական ստույգ ժամանակագրական հատկանիշներ: Դատելով քարերի մշակման եղանակներից ու չափերից, բոլոր չորս պատերը լրիվ կամ մասամբ նորոգված են: Ուշ շրջանի արևմտյան և հյուսիսային պատերին դրսի կողմից կցվել են լրացուցիչ պատեր՝ առավել կայունություն տալու համար: Հարավային պատի ստորին քարերը ավելի հին են և մեծածավալ: Միջնամասի քարերը թեև ինչ-որ չափով տարբերվում են, սակայն նույնպես հնության նշաններ ունեն: Վերին մասում քարերը կտրուկ փոքրանում են: Միջնամասի հատվածում առանձնապես ուշագրավ են պատուհանների պսակները, որոնց զարդաքանդակները բնորոշ են VII դարին[10]: Վաղ միջնադարյան ժամանակներին բնորոշ է նաև մուտքը. այն ունեցել է շքեղ ձևավորում, որ տարածված էր IV—VII դդ. (Քասաղ, Տեկոր, Ավան, Արուճ և այլն): Նիրկայումս երևում են այդ մուտքի հետքերը միայն:

Առավել հարուստ ձևավորում ունի արևելյան պատը: Վերին և միջին մասերի երեսապատման քարերը իրենց հնությամբ խիստ տարբերվում են ստորինից: Վերին հատվածը զարդարված է չորս որմնակամարներով և ընդհանուր ձևավորման եղանակով հիշեցնում է Տեկորի արևմտյան պատի ձևավորման սկզբունքը (այս հանգամանքը նկատել և շեշտում է նաև Ա. Յակոբսոնը), ընդ որում այդ կամարները զարդարված են գծային եղանակով, որը նույնպես բնորոշ է մինչև VII դարի ձևավորման տարրերին: Կամարների

[8] А. Б. Ереман, Храм Рипсимэ, Ереван, 1955, էջ 59, 60:

[9] Ա. Սահինյան, Զովունու ճարտարապետական խումբը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1968, № 1, էջ 109, 112, 113:

[10] Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, էջ 158.

ստորին մասն ընդգծված է քիվով։ Այն նմանություն ունի Տեկորի և Երերույքի հետ ոչ միայն որպես IV—V դդ. դեկորատիվ տարր, այլև ունի նույն ձևը, կտրվածքը։

Արևելյան պատի կենտրոնում տեղադրված են երկու կլոր պատուհաններ, շքեղ ձևավորված շրջանակներով։ Ամբողջ այս շարքի ստորին մասը եզրափակում է նեղ ու երկարավուն պատուհանը (որի ձևը նման է հարավային պատուհաններին)՝ նույնպես ձևավորված VII դարին բնորոշ զարդաքանդակ պսակով (նկ. 2, 3)։



Նկ. 1

Ուշագրավ պատկեր են ներկայացնում նաև ներսի պատերի դեկորատիվ տարրերը։ Որմնասյունները պսակում են տարատեսակ գալարազարդ խոյակներ։ Առանձնապես ուշադրություն են գրավում գալարազարդերի տակ դրված զամբյուղահյուս բարձիկները, որ հայտնի են Զվարթնոցից, Իշխանից, Դվինից և ներսեսաշեն այլ եկեղեցիներից։

Հուշարձանի առանձին հատվածներում երեսապատման քարերի վրա կան վաղ միջնադարում մեծապես տարածված՝ վարպետների բազմաթիվ նշաններ։

Այս ամենը պարզորոշ ցույց է տալիս, որ Ս. Հովհաննես եկեղեցին Դրասխանակերտցու կառուցածը լինել չի կարող։ Դա Հայաստանի հնագույն պաշտամունքային շինություններից մեկն է եղել և VII դարում ենթարկվել է արմատական նորոգման։ Դատելով եղած հետքերից, XIII, XVIII, XIX դդ. եկեղեցին նորոգվել է ևս մի քանի անգամ։

Նկատի ունենալով այս ամենը, փորձենք պարզել, թե որն է Դրասխանակերտցու կառուցածը։ Ինքը պատմիչը այդ մասին գրում է. «Եւ դարձեալ չու յուղի անկեալ շոգաք մինչև ի ձեռակերտ ամրոցիկն իմ Բիւրական, զոր ստացեալն էր իմ գանձի գնոյ, ուր և շինեալ յարդարեալ իսկ էի եկեղեցի հաստահեղոյս կոփածոյ քարամբք պերճապատոյճ պճնողութեամբ և նկարակերտ յօրինուածով՝ և վանս կուսակրօն միանձնացելոց զնա հաստատեալ»[11]։ Այսպիսով, եկեղեցին կառուցվել է կոփածո քարերով, որը նույնպես չի համապատասխանում Ս. Հովհաննես եկեղեցուն։ Պատմիչը մատնանշում է նաև տեղը՝ այն գտնվել է ամրոցում։ Թ. Թորամանյանը գրում է, որ «ակնարկված բերդը այժմ գոյություն չունի, տեղն էլ հայտնի չէ»[12]։

Սակայն այդ բերդը կա։ Այն գտնվում է Արտավասիկի ձորում։ Պահպանվել են հարավային պարսպապատերի հատվածը՝ ավելի քան 1 մետր

11 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 336։

12 Թ. Թորամանյան, Նյութեր..., II, էջ 124։

բարձրությամբ և բոլորաձև աշտարակները, որ տեղադրված են մուտքի երկու կողմերում։ Արևելյան պարսպի գիծն անցել է ձորի եզրով։ Այս հատվածում գոյություն ունեն միայն հիմնապատերը, շարված հսկայական մեծության քարերով։ Բերդի տարածքում սփռված են բազմաթիվ շինությունների ավերակ մնացորդները։ Ահա հենց այստեղ էլ կանգնած է կոփածո քարերով կառուցված մի եկեղեցի, որն ըստ ամենայնի ունի բոլոր տվյալները Դրասխանակերտցու կառուցածը լինելու համար։ Եկեղեցին պատկանում է քառաթև կենտրոնագմբեթների տիպին, որոնք մեծապես տարածված են եղել VII դարում։ Թ. Թորամանյանը եկեղեցու կառուցման ժամանակն անվերապահորեն

Նկ. 2



Նկ. 3

ընդունել է VII դարը[13]։ Սակայն եկեղեցիների այս տիպը հանդիպում է նաև ավելի ուշ, մասնավորապես IX—X դդ. (Սևանա կղզում, Մարմաշենում[14], Կամոյի շրջանի Հացառատ գյուղում, Մարտունու շրջանի Թազագյուղում և այլն), ընդ որում, IX—X դդ. կառուցված եկեղեցիների առավել տարբերիչ հատկանիշներից մեկն էլ այն է, որ նրանց զգալի մասը կառուցված է կոփածո քարերով՝ մի հանգամանք, որ վաղ միջնադարյան հուշարձանների համար բացառված է։ Միաժամանակ երեսապատման այդ կոփածո քարերը VII դարի համար զգալիորեն փոքր են։ Այդ չափը տարածված էր IX—XI դդ.։ Այսպիսով, եկեղեցու կառուցման ժամանակը IX—XI դդ. վերագրելը կասկածի տեղիք չի տալիս, իսկ կոփածո քարերով կառուցված լինելու համապատասխանությունը Դրասխանակերտցու թողած նկարագրության հետ և, ամենակարևորը՝ բերդի տարածքում գտնվելու հանգամանքը համոզիչ հիմք են տալիս

13 Նույն տեղում, էջ 125։

14 Այս եկեղեցու գմբեթի կլորավուն թմբուկը բացառում է VII դարին պատկանելու հնարավորությունը։

այս եկեղեցին պատմիչի կառուցածն ընդունելու համար (նկ. 4, հատակագիծը կազմեց Ա. Լ. Յակոբսոնը)։

Հիշյալ համապատասխանություններին կարելի է ավելացնել ևս մեկը՝ պատմիչն ասում է, որ այն զարդարված է եղել նկարներով։ Ներկայումս այդ նկարներից որևէ հետք չի մնացել, սակայն տեղ-տեղ մնացել են երեսապատման շաղախի մնացորդները, որոնք վկայում են նախկինում եկեղեցու ներսը սվաղով պատված լինելու, ուրեմն և որմնանկարներ ունենալու հավանականության մասին։



Նկ. 4

Այս եկեղեցին ևս ունի նորոգումների հետքեր։ Արևմտյան թևը, ի տարբերություն մնացած մասի, կառուցված է սրբատաշ քարերով։ Ի դեպ, այդ հատվածում հանդիպում են վարպետների նշաններ՝ հար և նման Ս. Հովհաննես եկեղեցու պատերին եղած վարպետների նշաններին։ Թ. Թորամանյանը այս պարագան ևս դիտում է որպես VII դարով թվագրելու հիմք։ Սակայն այս քարերը մեծությամբ և մշակումով տարբերվում են մյուսներից և ակնհայտորեն բերված են Ս. Հովհաննես եկեղեցուց։ Թ. Թորամանյանը որևէ տեղեկություն չունի Ս. Հովհաննես եկեղեցու վրա այդպիսիների գոյության, իսկ ամենակարևորը՝ նույնության մասին, որից էլ կարողանար հետևեցնել, որ Ս. Հովհաննես եկեղեցին X դարում կառուցված լինել չէր կարող (նկ. 5)։

Արևմտյան թևը սրբատաշ քարերով երեսապատելուց հետո վերստին շինել են թևի կամարածածկը, որի կարը երևում է ներսից, կամարի հատվածում։ Այնուհետև վրան դրել են սյունազարդ թմբուկով փոքրիկ գմբեթ, մեջը զանգ կախելու համար։ Զանգակատան այս տիպը մեծապես տարածվեց ուշ միջնադարում, սակայն այստեղ այն դժվար է հեռացնել առնվազն XII—XIII դդ.։ Թերևս իր տիպի մեջ սա հնագույնն է։ Մուտքի ճակատակալ քարի վրա փորագրված է կարճառոտ մի արձանագրություն՝ Թ ՈԱ (1152)։ Թերևս դա զանգակատան կառուցումը վավերացնող տարեթվի վիմական վկայագիրն է։ Նման թվագրության համար միաժամանակ հիմք են տալիս մի կողմից այս հատվածի XI—XIII, թերևս XIV դդ. բնորոշ սրբատաշ քարերով կառուցված լինելու տարբերությունը և մյուս կողմից՝ վրան եղած զարդապատումները։ Զանգակատան սյունները հենվում են կլորավուն պատվանդանի վրա, իսկ վերջինս՝ երկլանջ տանիքին դրված ուղղանկյուն խարսխի։ Կլորավուն պատվանդանը և գմբեթը զարդարված են XI—XIII դդ. տարածված շղթայաձև հյուսվող զարդաձևերի գոտիներով[15]։ Նմանօրինակ զարդատեսակ-

[15] Անիի Ս. Փրկիչ, Կեչառիս, Բարձրաքաշ, Սանահին, Եղվարդի Աստվածածին (XIV դ.) և այլն։ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, 1957, էջ 23, 41, նկ. 20։

ներ հանդիպում են նաև բերդի տարածքով մեկ սփռված սրբատաշ բազմաթիվ քարերի վրա, որոնք այլ շինությունների մնացորդ են։

Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ եկեղեցին կառուցելուց հետո այստեղ նա միաբանություն է հիմնում։ Ներկայումս հսկայական ավերակների տակ թաքնված շինությունների մնացորդների մասին պատկերացում կազմելն անհնար է, սակայն քիվերից, սյան բազմանիստ խարիսխներից, շքամուտքի մնացորդներից դատելով, պետք է ենթադրել, որ այնտեղ եղել են նաև այլ մոնումենտալ շինություններ, որոնց վրա եղած տարատեսակ շղթայահյուս զարդապատումներն ընդօրինակելով կառուցել են եկեղեցու զանգակատունը (նկ. 6)։



Նկ. 5

Դրասխանակերտցին, ցավոք, մյուս շինությունների վերաբերյալ չի թողել որևէ նկարագրություն, միայն բերդի մասին ասում է, որ ուներ դրսից ներս դեպի վեր տանող աստիճաններ[16]։ Ամենահետաքրքիր տեղեկությունը այն է, որ բերդի մեջ եղել է թատրոնի շենք։ Պատմիչն ասում է, որ բերդը գրավելուց հետո Նասր ոստիկանը «...հանեալ զիւրաքանչիւրս զնոսա ի թէատրոն անդր՝ ճարակ անողորմ սրոյ տային»[17]։ Ուրեմն դա եղել է բավական մեծ շինություն, ուր կարող էր բազմաքանակ ժողովուրդ հավաքվել և, ըստ ամենայնի, եղել է հասարակական, մասնավորապես թատերական հանդեսների համար նախատեսված շենք։ Այդ իմաստով նշված հանգամանքը հայ մատենագրության մեջ տեղ գտած ամենաուշագրավ տեղեկություններից մեկն է։

Պատմիչի բոլոր նկարագրություններից դատելով, Բյուրականի ամրոցը, թերևս իր շուրջը սփռված տարածքով հանդերձ, եղել է բավական մարդաշատ, որով և կարելի է բացատրել այն պարագան, որ նա այստեղ վանք է հաստատել, ընդ որում՝ եպիսկոպոսանիստ։ Սակայն դժվար է պատկերացնել, որ նման վայրում եպիսկոպոսանիստ վանքը բաղկացած լիներ ընդամենը մեկ եկեղեցական շենքից։ Այս առիթով ուշագրավ լրացում է անում 1428 թ.

16 Դրասխանակերտցի, էջ 346։
17 Նույն տեղում, էջ 353։

գրված մի ձեռագիր, որը հնարավորություն է ընձեռում պարզելու Բյուրականում եղած եկեղեցիների քանակը՝ ըստ նրանց անունների։ Ահա հենց այստեղ էլ կարելի է ըստ արժանվույն գնահատել անվանակոչության պարագայի կարևորությունը, որովհետև ձեռագրի տված տեղեկությունը հիմք է տալիս պարզելու նախ՝ որ Դրասխանակերտցու կառուցածը Ս. Հովհաննես եկեղեցին չէ և երկրորդ՝ ինչպե՞ս է կոչվել նրա կառուցած եկեղեցին։ Այս ձեռագրի համաձայն Բյուրականում եղել է երեք եկեղեցի՝ Ս. Հովհաննես, Ս. Նշան և Հովհաննու Ս. Աստվածածին[18]։ Անվանը համաձայն Ս. Հովհաննեսը գյուղի կենտրոնի եկեղեցին է, որի Ս. Հովհաննես անունը ոչ թե Հ. Դրասխանա-



Նկ. 6

կերտցու անվան պատճառով է ավանդաբար կնքվել, այլ եկեղեցին նախապես նվիրված է եղել Հովհաննես Մկրտչին[19]։ Ս. Նշանը չի պահպանվել, բացառված չէ, որ այն գտնվել է բերդի մեջ։ Ամենակարևորը Հովհաննու Ս. Աստվածածինն է։ Դատելով անվանման այս եղանակից, նրանում մատնանշված է Հովհաննու, այսինքն՝ Դրասխանակերտցու կողմից կառուցված լինելու պարագան։ Այսպիսով, Դրասխանակերտցու կառուցածը կոչվել է ոչ թե Ս. Հովհաննես, այլ Ս. Աստվածածին, իսկ սրանից էլ հետևում է, որ գյուղի կենտրոնում կանգնած Ս. Հովհաննես եկեղեցին պատմիչի կառուցածը չէ։ Միաժամանակ նկատի առնելով պատմիչի տված նկարագրության համապատասխանությունը Արտավասիկի հետ, ինչպես և այդ եկեղեցու ժամանակագրական բնութագիրը, պետք է ընդունել, որ Դրասխանակերտցու կառուցած Հովհաննու Ս. Աստվածածինը Արտավասիկի կենտրոնագմբեթ այս եկեղեցին է։

Իր կառուցած եկեղեցու մասին Դրասխանակերտցին խոսում է անցյալ ժամանակով և ասում, որ այս վայրն ինքը դնել է սեփական միջոցներով, եկեղեցի կառուցել և վանք հիմնել։ Շարունակության մեջ նկարագրելով

18 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 148։

19 Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 1450։

Նասր ոստիկանի արշավանքը և բարբարոս կոտորածները, մասնավորապես Թատրոնի շենքի մեջ, նա հիշատակում է մի շարք նահատակված վանականների անուններ։ Կառուցման ժամանակը կարելի է որոշել միայն ընդհանուր եղանակով՝ մինչև 914 թ., որովհետև Սմբատ I-ի մահից հետո երկար տարիներ Դրասխանակերտցին շրջագայում էր ու հալածվում։ 926 թ. Նասրի արշավանքի ժամանակ եկեղեցին վաղուց արդեն կառուցված էր։ Եկեղեցին կառուցվել է Բյուրականի ամրոցը գնելուց անմիջապես հետո։ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Առաքելյանի կարծիքով ամրոցը նա գնել է X դարի սկզբներին[20]։ Լեոն կարծում է, որ Դրասխանակերտցին կառուցել է նաև Բյուրականի ամրոցը[21], սակայն պատմիչը գրել է, որ այդ ամրոցը ինքը գնել է, իսկ իր կառուցածը ընդամենը նրա միջի մեկ եկեղեցին է։

Արտավասիկի այս հնավայրը հնագիտական հետազոտությունների խիստ կարիք ունի, որոնց շնորհիվ գուցե թե գտնվի Թատրոնի շենքը։

Ամփոփելով նկարագրված հուշարձանների ընձեռած տվյալները, կարելի է հանգել հետևյալ եզրակացության. Ս. Հովհաննես եկեղեցին կառուցվել է ոչ ուշ քան VII դարը, նախաքրիստոնեական շենքի հիմքի վրա։ Այդ հնագույն ժամանակներից պահպանվել են միայն հարավային պատի ստորին քարաշերտերը և ուղղանկյուն խորանն իր որմնախորշով հանդերձ։ Շենքը վերաշինվել և նորոգվել է VII, XIII դդ., իսկ արևմտյան և հյուսիսային պատերին XIII, XIX դդ. կցել են լրացուցիչ պատ՝ առավել ամրություն տալու նպատակով։

Հովհաննես Դրասխանակերտցու կառուցածը Արտավասիկի եկեղեցին է։ Այն կոչվել է Ս. Աստվածածին, կառուցվել է Դրասխանակերտցու կաթողիկոսության սկզբնական շրջանում՝ 898—914 թթ., սեփական միջոցներով գնած բերդի մեջ, որտեղ նա հիմնել է եպիսկոպոսանիստ վանք։ X դարում Բյուրականը եղել է մարդաշատ բնակավայր և ունեցել է Թատրոն, որը, ինչպես և մոնումենտալ շենքերի մնացորդները, հավանաբար, գտնվում են բերդի տարածքում սփռված ավերակների տակ։

ЗАМЕЧАНИЯ О СРЕДНЕВЕКОВЫХ ПАМЯТНИКАХ БЮРАКАНА

А. А. МАНУЧАРЯН

(Резюме)

По свидетельству историка Иоанна Драсханакертци, в бюраканской крепости им была построена церковь и основан монастырь. В настоящее время там сохранились две церкви: одна в центре села, другая на его восточной окраине. Первая известна как церковь св. Иоанна, вследствие чего ее строительство традиционно приписывается Иоанну Драсханакертци. Однако архитектурные особенности этого сооружения имеют раннесредневековую и даже более древнюю характеристику. Датировке

20 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, Երևան, 1976, էջ 178։

21 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. 2, Երևան, 1967, էջ 567։

X веком более соответствует архитектура второй церкви, которая известна под именем Артавасик. На ее территории имеются многочисленные руины других монументальных сооружений, свидетельствующие о существовании монастыря (возможно, резиденции епископа) и театра, о которых сообщает историк. Следует также отметить, что название первой церкви не имеет никакого отношения к Иоанну Драсханакертци. Согласно одной рукописи, она была посвящена Иоанну Крестителю, а церковь, построенная историком, по другой рукописи, была посвящена Богородице.